# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

⊠ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ 101/1073.1/3736-16

«09» 08 2016 թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ

Ձեր համայնքներում ներդրվել և գործարկվել է «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը» (ՀԿՏՀ):

Տեղեկատվական համակարգի զարգացման և վերապատրաստման կենտրոնը (ՏՀԶՎԿ) մշտական հիմունքներով իրականացնում է համայնքներում ներդրված ՀԿՏՀ-ի սպասարկման աշխատանքները՝ աջակցելով համայնքապետարաններին համակարգի կայուն և արդյունավետ շահագործման հարցերում:

ՀԿՏՀ-ը արդյունավետ կիրառելու նպատակով Ձեզ եմ տրամադրում շահագործման կանոնները՝ տրամադրված ՏՀԶՎԿ կենտրոնի կողմից:

Առդիր՝ 1 թերթ:

ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԴԱՐԲԻՆՅԱՆ

կատ. Դ.Մանուչարյան
հեռ. /0322/ 4-09-27

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
«10» 08 2016 թ
Մտից թիվ 281

# ԿԱՆՈՆՆԵՐ
## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ (ՀԿՏՀ) ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ

ՀԿՏՀ-ում առկա տվյալների անվտանգությունը և հուսալիությունը ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել ստորև նշված գործողությունները:

1. ՀԿՏՀ տվյալների շտեմարանը և ֆայլերը պարտադիր կերպով և պարբերաբար (առնվազն ամիսը երկու անգամ) պետք է արխիվացվեն ու պատճենվեն արտաքին կրիչների (արտաքին կոշտ սկավառակ, DWD, ֆլեշ դիսկ, այլ արտաքին կուտակիչ) վրա: Ցանկալի է արխիվների պատճենումը արտաքին կրիչների վրա կատարել երկու օրինակից և պահպանել չհրկիզվող պահարաններում:
   - Մինչև ՀԿՏՀ տվյալների պահեստային պատճենումը պետք է ՀԿՏՀ-ի *«Կայքի կառավարում»* -- >> *«Համակարգի վերականգնում»* բաժնում սեղմել «Կատարել Backup» կոճակը: Արտաքին կրիչների վրա պետք է ամբողջությամբ արտագրել սերվերի D սկավառակում գտնվող CMISDBBackups և CMISUploadFiles թղթապանակները (իրենց պարունակությամբ):
2. Սերվեր համակարգիչը պետք է միացված լինի գործող անխափան սնուցման սարքի (UPS) միջոցով: Եթե անխափան սնուցման սարքը «SMART» տիպի է, ապա այն պետք է կարգաբերել, որպեսզի սերվերը ինքնաշխատ անջատվի անխափան սնուցման սարքի ռեսուրսի սպառման դեպքում:
3. Արգելվում է փոխել սերվեր համակարգչի օպերացիոն համակարգը, անունը: Արգելվում է հեռացնել սերվերում տեղադրված ծրագրերը:
4. ՀԿՏՀ անխափան շահագործման ապահովման նպատակով խստորեն արգելվում է սերվերի վրա տեղադրել այլ ծրագրեր, խաղեր, տեսա – ձայնային ֆայլեր և այլն:
5. Սերվեր համակարգչի օպերացիոն համակարգը պետք է ունենա գաղտնաբառ և լինի բաղկացած առնվազն 6-8 նիշից: Ցանկալի է, որ գաղտնաբառը լինի բարդ՝ ունենա առնվազն 1 մեծատառ նիշ, առնվազն 1 փոքրատառ նիշ, առնվազն 1 թիվ:
6. Սերվեր համակարգչի օպերացիոն համակարգում անհրաժեշտ է հրաժարվել «Administrator» և համայնքի անվամբ գրանցված օգտագործողներից: Առկայության դեպքում դրանք պետք է վերանվանվեն:
7. Անհրաժեշտ է օգտագործել հակավիրուսային ծրագրեր և դրանք պարբերաբար թարմացնել: Հարկ է շաբաթը մեկ անգամ հակավիրուսային ծրագրով ստուգել սերվեր և սպասառու համակարգիչները:
8. ՀԿՏՀ-ում գրանցված օգտագործողների ծածկագրերը պետք է բաղկացած լինեն առնվազն 6-8 նիշից: Ցանկալի է, որպեսզի դրանք լինեն բարդ՝ ունենան առնվազն 1 մեծատառ նիշ, առնվազն 1 փոքրատառ նիշ, առնվազն 1 թիվ:
9. Պետք է փոխել ՀԿՏՀ-ում առկա «Admin» և «Pet» օգտագործողների նախնական ծածկագրերը: Եթե ՀԿՏՀ-ում արդեն կա Administrator-ի իրավասություններ ստացած որևէ օգտագործող, ապա կարելի է «Admin» օգտագործողին հեռացնել:
10. Հարկ է մաքուր պահել սերվերը և աշխատանքային կայանները: Անհրաժեշտության դեպքում անջատված վիճակում բացել համակարգչային բլոկի կափարիչը և փոշեկուլով մաքրել այն, յուղել հովացուցիչները:
11. ՀԿՏՀ հուսալի և անվտանգ աշխատանքն ապահովելու համար սերվերը պետք է լինի առանձնացված (ծառայի բացառապես ՀԿՏՀ գործարկման նպատակների համար, ինչպես նաև բացառվի այլ աշխատանքների կատարումը այդ սերբերի միջոցով):

ՀԿՏՀ շահագործման ընթացքում առաջացած խնդիրների և հարցերի դեպքում անհրաժեշտ է զանգահարել (010)-24-64-71, 23-80-21 հեռախոսահամարներով, դիմել ինտերնետային կայքի միջոցով՝ www.infosys.am, էլեկտրոնային փոստի միջոցով՝ isintellect@yahoo.com, Skype-ի միջոցով կամ այցելել կազմակերպության գրասենյակ՝ ք.Երևան, Կոմիտաս 51, 2-րդ հարկ հասցեով:

Լոռու մարզի համայնքների կողմից ՀԿՏՀ շահագործման մշտադիտարկման արդյունքները

| N | Համայնք | ՀԿՏՀ տարբերակ | Վերապր. Մասնագետ | Կայքը | Կայքի հասանելիությունը | ՀԿՏՀ շահագո | Ինչը չի աշխատում, մեկնաբանություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ | 2,01 | 35 | 46.130.127.17 | Այո | 9 | Ամեն ինչ աշխատում է |
| 2 | ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ | 2,01 | 14 | spitak.am | Այո | 9 | Ամեն ինչ աշխատում է |
| 3 | ԹԵՂՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ (ԼՈՌԻ) | 1,90 | 3 | 46.130.112.88 | Այո | 8 | Գույքի կառավարում |
| 4 | ՃՈՃԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 8 | chochkan.am | Այո | 8 | Մտիցներ |
| 5 | ՍԱՐՉԱՊԵՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 18 | sarchapet.am | Այո | 8 | Բյուջե |
| 6 | ՏԱՇԻՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 6 | tashircity.am | Այո | 8 | Մտիցներ |
| 7 | ԼԵՌՆԱՆՑՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 1 | 46.130.127.186 | Այո | 7 | Գույքի կառավարում, Տուրքեր |
| 8 | ԼԵՌՆԱՊԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 3 | lernapat.am | Այո | 7 | Մտիցներ, թույլտվություններ |
| 9 | ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ | 2,01 | 19 | cmis.vanadzor.ar | Այո | 7 | Թույլտվություններ, գույքի կառավարում, բյուջեի |
| 10 | ՇՆՈՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 4 | shnogh.am | Այո | 6 | Բյուջե, Գույքի կառավարում, Տուրքեր |
| 11 | ՍՎԵՐԴԼՈՎԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,90 | 2 | 46.130.113.87 | Այո | 6 | Բյուջե, Տուրքեր |
| 12 | ՎԱՐԴԱԲԼՈՒՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 5 | 46.130.112.121 | Այո | 6 | Գույքի կառավարում, Տուրքեր |
| 13 | ԱՔՈՐԻԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 6 | 46.130.112.93 | Այո | 6 | Բյուջե, մտիցներ, թույլտվություններ |
| 14 | ԲԱԶՈՒՄԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 5 | bazum.am | Այո | 6 | Բյուջե |
| 15 | ԳԱՐԳԱՌԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 4 | gargar.am | Այո | 6 | Բյուջե, մտիցներ, թույլտվություններ, գույքի |
| 16 | ԳԵՂԱՍԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 3 | geghasar.am | Այո | 6 | Բյուջե, մտիցներ, թույլտվություններ, գույքի |
| 17 | ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 5 | lermontovo.am | Այո | 6 | Մտիցներ, բյուջե, գույքի կառավարում, |
| 18 | ԿՈՒՐԹԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 6 | kurtan.am | Այո | 6 | Մտից, թույլտվություններ, գույքի կառավարում |
| 19 | ՀԱՂՊԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,90 | 8 | haghpat.am | Այո | 6 | Մտից, թույլտվություններ, գույքի կառավարում |
| 20 | ՄԱՐԳԱՀՈՎԻՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 4 | margahovit.am | Այո | 6 | Մտից, բյուջե, Թույլտվություններ, գույքի |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 21 | ՄԵԾ ՊԱՐՆԻԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 1 | 46.130.112.191 | Այո | 6 | Մտից, ելից, բյուջե, գույքի կառավարում |
| 22 | ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ (ԼՈՌԻ | 2,01 | 1 | shahumyanlori.a | Այո | 6 | Բյուջե, թույլտվություններ, գույքի կառավարում |
| 23 | ԱՐԵՎԱՇՈՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 4 | arevashogh.am | Այո | 5 | Բյուջե, մտից, գույքի կառավարում, |
| 24 | ԱՐՋՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,90 | 2 | arjut.am | Այո | 5 | Բյուջե, ավագանու որոշումներ, |
| 25 | ԳՈՒԳԱՐՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 2 | gugarqhamaynq. | Այո | 5 | Բյուջե, մտիցներ, թույլտվություններ, գույքի |
| 26 | ԼԵՌՆԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 3 | 46.130.112.65 | Այո | 5 | Մտիցներ, բյուջե, գույքի կառավարում, |
| 27 | ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,90 | 2 | 46.130.112.245 | Այո | 5 | Մտից, բյուջե, գույքի կառավարում, |
| 28 | ՇԱՄԼՈՒՂԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ | 1,90 | 5 | shamlugh.am | Այո | 5 | Բյուջե, թույլտվություններ, գույքի կառավարում |
| 29 | ԱԳԱՐԱԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ (ԼՈՌԻ) | 1,91 | 2 | agaraklori.am | Այո | 4 | Բյուջե, մտից, ելից, համայնքի ղեկավարի |
| 30 | ԳՈԳԱՐԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,90 | 4 | 46.130.127.104 | Այո | 4 | Բյուջե, Գույքի կառավարում, Տուրքեր, |
| 31 | ՖԻՈԼԵՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,90 | 5 | 46.130.112.34 | Այո | 4 | Մտիցներ, համայնքի ղեկավարի որոշումներ, |
| 32 | ԴԱՐՊԱՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ (ԼՈՌԻ) | 1,90 | 2 | 87.241.166.158 | Այո | 3 | Մտիցներ, համայնքի ղեկավարի, ավագանու |
| 33 | ՄԵԾԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 9 | metsavan.am | Այո | 3 | Մտից, ելից, բյուջե, գույքի կառավարում, համայնքի |
| 34 | ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ | 2,01 | 9 | 87.241.173.86 | Այո | 3 | Մտիցներ, թույլտվություններ, գույքի |
| 35 | ՕՁՈՒՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,89 | 9 | odzun.am | Այո | 3 | Մտիցներ, ելիցներ, բյուջե, գույքի կառավարում, |
| 36 | ԱՐԵՎԱԾԱԳԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,89 | 5 | arevatsag.am | Այո | 2 | Բյուջե, մտից, ելից, համայնքի ղեկավարի |
| 37 | ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 5 | 46.130.112.7 | Այո | 2 | Բյուջե, մտիցներ, ելիցներթույլտվություններ, |
| 38 | ԴԵԲԵՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,90 | 3 | 46.130.52.105 | Այո | 2 | Մտիցներ, համայնքի ղեկավարի, ավագանու |
| 39 | ՀԱՐԹԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,90 | 5 | hartagyugh.am | Այո | 2 | Բացի Բնակչության ռեգիստրից ոչինչ չի |
| 40 | ՆՈՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ (ԼՈՌԻ) | 1,91 | 4 | 46.130.112.242 | Այո | 2 | Աշխատում է միայն ելիցները |
| 41 | ՍԱՐԱՀԱՐԹԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 5 | 46.130.112.198 | Այո | 2 | Աշխատում է միայան բնակչության ռեգիստրը |
| 42 | ՈՒՌՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,90 | 3 | 46.130.8.12 | Այո | 0 | Դադարեցրել են աշխատանքը |
| 43 | ՎԱՀԱԳՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 3 | 46.130.112.218 | Այո | 0 | Դադարեցրել են աշխատանքը |
| 44 | ԿԱԹՆԱՋՈՒՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ (ԼՈՌԻ) | 1,90 | | 46.130.112.240 | Այո | 0 | Դադարեցրել են աշխատանքը |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 45 | ԿԱԹՆԱՌԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 2 | 46.130.112.243 | Այո | 0 | |
| 46 | ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 13 | cmis.alaverdi.am | Ոչ | | Սերվերի մշտական հիշող սարքը՝ HDD խափանված է |
| 47 | ԱԽԹԱԼԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 9 | 46.130.112.72 | Ոչ | | |
| 48 | ԴՍԵՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 4 | 46.130.112.201 | Ոչ | | |
| 49 | ԼԵՋԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,89 | 1 | 46.130.50.13 | Ոչ | | |
| 50 | ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 2 | 46.130.53.51 | Ոչ | | |
| 51 | ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,90 | 3 | norkhachakap.ar | Ոչ | | |
| 52 | ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,91 | 3 | shirakamut-nalba | Ոչ | | |
| 53 | ՋՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ (ԼՈՌԻ) | 1,90 | 3 | jrashen.am | Ոչ | | |
| 54 | ՄԵԾ ԱՅՐՈՒՄԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,89 | 2 | | - | | Իրական IP հասցե չունեն |
| 55 | ՍԱՐԱՄԵՋԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | 1,90 | 3 | | - | | Իրական IP հասցե չունեն |